

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆՆԱ  
ԵՐՈՒՍԱԴԵՍԱՅՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՒ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ (1693-1733)<sup>1</sup>**

**Նորայր Պողոսեան**

**Ե**րուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, միաբանութեան ու հայ համայնքի գլխաւոր առաքելութիւնը եղել է Տէրունական սրբավայրերի պահպանութիւնը, ամեն մի սրբավայրում ծէսն անխափան կատարելը: Սակայն հոգևոր այդ ծառայութեանը զուգահեռ Երուսաղէմահայութիւնը նաև գրաւոր մշակոյթի որոշակի արդիւնքներ է տուել:

Մատենագրական մի շարք փաստերի հիման վրայ առիթ ունեցել ենք ասելու, որ դեռևս Ե. դարում հայկական դպրութիւնը հասել է տարածուել է Սուրբ Երկրում և Երուսաղէմում: Օրինակ՝ Դաւիթ Անյաղթն իր «Բարձրացուցէք» ճառը խօսել է «յԵրուսաղէմ ի Գողգոթային, յաւոր Խաչվերաց տօնին»<sup>2</sup>: Անհաւանական չէ ենթադրել, որ Դաւիթ Անյաղթը հենց այստեղ էլ գրի է առել իր ճառը: «Կարգաւորութիւն օրինութեքեր ցուցակի» անունը կրող յիշատակարանը, որ կցուած է «Մայր Մաշտոցին», պահպանել է թարգմանական գործունէութիւնը Երուսաղէմում ծաւալած Կորիւնի, Խոսրովի, Ընծակի մասին աւանդական այսպիսի տեղեկութիւններ. «Իսկ զկանոն ջոր օրինելոյն Սրբոյն Բարսղի է արարեալ յեօթներորդ ամի հայրապետութեան իւրոյ ի Կեսարիա Կապադովկիացոց, և յԵրուսաղէմ քաղաքի ի հոսանս Յորդանանու հանդիպեցաւ Խոսրով թարգմանիչ... և անդ գրեաց և երբ ի Հայս»: «Իսկ Ապաշխարողաց կարգել և արձակել ի մեծի Հինգշաբթոյն երանելոյն Կիւրդի Երուսաղիմացոյ գրեալ... **ի դուռն Սրբոյն Սիոնի, Ընծակ և Կորիւն թարգմանիչք բերին**»<sup>3</sup>:

Ողջ միջնադարում Երուսաղէմի հայ միաբաններն ու ուխտաւորութեամբ այստեղ այցելած հոգեւորականները գլխաւոր առաքելութեան՝ սրբավայրերի պահպանութեան հետ մէկտեղ ստեղծել, գրել ու թարգմանել են բազմաթիւ երկեր, նաեւ արտագրել ու բազմացրել են անհամար ձեռագրեր, այսինքն՝ Երուսաղէմը մշտապէս եղել է հայ դպրութեան և գրչութեան կենտրոններից մէկը<sup>4</sup>:

Այս կենտրոնի գրական արդիւնքը հարստացնողներից մէկը եղաւ ԺԷ. դարի վերջի և ԺԸ. դարի սկզբի մատենագիր Յովհաննէս Երուսաղէմացին: Յովհաննէս Հաննա

անունով յայտնի<sup>5</sup> հոգևորական-մատենագրից պահպանուել են կենսագրական որոշ տեղեկութիւններ, որոնց, ինչպէս նաև նրա հեղինակած «Գիրք պատմութեան Երուսաղէմի» երկին է նուիրուած ներկայ հրապարակումը:

\*\*\*

**Հաննայի ապրած ժամանակաշրջանի ընդհանուր նկարագիրը**

ԺԷ. դարի վերջին և ԺԸ.-ի սկզբին իր գործունէութիւնն սկսած Յովհաննէս Հաննայի անունը մեծապէս կապուած է Գրիգոր Շղթայակիր և Յովհաննէս Կոլոտ պատրիարքների, Երուսաղէմի և Կ.Պոլսի հայոց պատրիարքութիւնների հետ: Յայտնի է, որ Ամրդոլու համալսարանի առաջնորդ Վարդան վարդապետի աշակերտներից Յովհաննէս Կոլոտն ու Գրիգոր Շիրվանցին թողնում են վանքը, շրջագայութիւններից յետոյ Գրիգոր Վարդապետը 1709 թ. առաջնորդ է կարգուում Մշոյ Ս. Կարապետ վանքում, 1715 թ. Պոլսի պատրիարք է ընտրուում Յովհաննէս Բաղիշեցի Կոլոտը, որի նախաձեռնութեամբ Գրիգոր Վարդապետ Շիրվանցին նշանակուում է և անմիջապէս Պոլսի բոլոր եկեղեցիներում յիշատակուում է որպէս «Պատրիարք Ս. Երուսաղէմի»: Սա կատարուում է Երուսաղէմի հայոց պատրիարքութեան 12 տարուայ անիշխանական մի շրջանից յետոյ, երբ որ պատրիարքական աթոռը միացուել էր Կ. Պոլսին, բազմաթիւ աշխարհիկ ու հոգեւորական տեղապահների ժամանակաւոր իշխանութիւնից յետոյ Երուսաղէմի Հայոց Միաբանութեան վրայ դիգուել էր հսկայական պարտք (նշուում է 800 քսակ), գրեթէ խաթարուել էր հոգեւոր-ծիսական գործունէութիւնը Երուսաղէմի հայկական սրբավայրերում, առգրաւուել էր եկեղեցական սպասքը:

Այս ամենը ներկայացնող աղբիւրների մէջ առաջնային տեղ է գրաւում Հաննայի պատմութիւնը, որտեղ ակնաւորապէս հեղինակն ասում է, թէ «տգէտ ու խելագար հովիւների» փառամոլութիւնն ու չարաշահութիւնը պատճառ են դարձել պատրիարքական աթոռների միաւորութեան համար, թէ փոխանորդներն իրենց հերթին նպաստում էին չարաշահութիւններին, մանաւանդ որ Կ.Պոլսի պատրիարքական աթոռն այնպիսի մթնոլորտի մէջ էր, որ տարուայ մէջ երկու-երեք պատրիարքներ էին փոփոխուում զանազան միջոցներով:

Յովհաննէս Կոլոտի կարգադրութեամբ

երկու աթոռները իրաւական տեսակետից բաժանում են, և դա 1716 թ. հաստատում է Օսմանեան կառավարական որոշմամբ: 1718 թուականից Գրիգոր Շոթայակիի Պատրիարքը հանգանակութիւն է սկսում Երուսաղէմի պարտքը վճարելու համար: Շոթայակիի կարողանում է նուիրատուութիւններով ազատել պարտքերից, աւելին՝ շինարարական ու քարեմորոզական անմասնադէպ շարժում է սկսում Երուսաղէմում, որն իր մէջ ներառում է եկեղեցիների ու միաբանութեան կեանքի վերակառուցումները, ուխտատուների նոր հոսքերի ապահովումը, գիտական աստիճանի բարելաւումը և այլ ոլորտներ: 1726-ին Կ.Պոլսի հայ 80 երեսիների և Կարապետ Ուլնեցի Կաթողիկոսի յորդորական նամակին անսալով՝ Գրիգոր Պատրիարքը հանում է շղթան պարանոցից, հետագայ տարիներին ձեռնամուխ է լինում Երուսաղէմի հայոց սրբավայրերը վերականգնելուն:

Հայ Երուսաղէմի այս բոլոր անցուղարձերի մէջ կենտրոնական դեր ունէր Յովհաննէս Հաննա Երուսաղէմացին, որին Գրիգոր Պատրիարքը դեռես Կ.Պոլսում բնակուելիս (1718-21 թթ.) նշանակել էր իրեն փոխանորդ, իսկ հետագայում վստահել էր միաբանութեան տարբեր կարեւոր պաշտօններ, ու Հաննան դարձել էր Գրիգոր Պատրիարքի հաւատարիմ գործակիցն ու աջ ձեռքը:

### Հաննայի կենսագրութիւնը ժամանակագրական կարգով:

Փորձել ենք մեզ հասանելի աղբիւրներից ի մի հաւաքել և ներկայացնել Յովհաննէս Հաննայի կենսագրութեան տուեալները՝ ժամանակագրական հերթականութեամբ: Առհասարակ պէտք է ասել, որ ժամանակը փրկել և տպագիր կամ ձեռագիր վիճակում մեր օրերն է հասցրել նկարագրող դէպքերի մասին որոշ վաւերագրեր, այդ թւում՝ նամակներ և կոնդակներ, որոնք մեծապէս նպաստել են այս հրապարակումը պատրաստելուն:

Յովհաննէս Հաննային նուիրում ոչ մեծաթիւ հրապարակումներում նրա ծննդեան թուական է նշում 1693 թ., հաւանական է՝ ծնուել է հենց Երուսաղէմում: Ծննդեան այլ թուականներ նոյնպէս նշում են, սակայն հենուելով 1733 թ. նրա մահուան առիթով Գրիգոր Շոթայակիի Պատրիարքի գրած նամակից, ուր յստակ ասում է, թէ «40 տարին նոր էր բոլորել», պէտք է աներկբայ ընդունել 1693-ը:

Ուխտատուութեամբ 1711-12 թթ. Երուսաղէմ այցելած հայ հոգեւորական ու մատենագիր Զուար Բահանան իր նկարագրութեան մէջ այսպիսի մի յիշատակութիւն ունի Հաննայի մասին. «Մովորութիւն է Սուրբ Զակար յորժամ փախստական գան, գնայ Հէննէ Եազըճին<sup>6</sup> նոցա հոգեւորուն և յանուանէ գրէ մի ըստ միոջէ և ելանէ դուրս: Անցանի երեք օրն և ձայնեն զնոքա և գրեն զդարպասն, ամէն մարդ իւր հային կօրէ»<sup>7</sup> (իրեն համեմատ-Մ.Գ.):

Եթէ նկարագրութեան մէջ նշում «Հէննէ Եազըճին» նոյն մեր Հաննա մատենագիրն է, ապա ուրեմն Զուար Բահանայի այցելութեան ժամանակ 18-19-ամեայ երիտասարդ հոգեւորականն արդէն պատասխանատու և կարեւոր դերակատարում ունէր Երուսաղէմի Հայոց Միաբանութիւնում: Ուխտատուներին ընդունելու գործը կարող էր վստահուել գործունէայ, կարող երիտասարդի միայն: Դժուար է պատկերացնել, որ Զուար Բահանայի խօսքը մէկ այլ Հաննայի մասին կարող էր լինել, չնայած որ Յովհաննէս անուան արաբական Հաննա տարբերակը ոչ հազուադէպ էր հանդիպում Մերձատու Արևելքի հայերի շրջանում:

1714 թ. Փետրուարի 14-ին Հաննան ձեռնադրուել է կուսակրօն քահանայ<sup>8</sup>, որի մասին պատմում է Ս. Զակորեանց ձեռագրատան թ. 884 ձեռագրի յիշատակարանը:

Երուսաղէմի Հայ Միաբանութիւնը, իրաւաբանօրէն առանձնանալով Կ.Պոլսից, ժամանակաւոր կոչումով այստեղ եկած «պապայի» կամ «նազըրի» փոխարէն կարիք ունէր հաւատարիմ և ունակ փոխանորդի ու մատակարարի, մտահոգ պատրիարքական փոխանորդի կամ աթոռակալի, և Կ.Պոլսի ու Երուսաղէմի երկու պատրիարքների կոնդակներով այդ պաշտօնին 1717 թ. կանչում է Յովհաննէս Վարդապետ Երուսաղիմացին: 1715 թ. Երուսաղէմի պատրիարք ընտրուած, 1717-ին հաստատուած Գրիգոր Շոթայակիի Կ.Պոլսից Երուսաղէմ է հասնում միայն չորս տարի անց՝ 1721 թ.-ին, և այդ ամբողջ միջանկեալ շրջանում Ս. Աթոռում պատրիարքի կարգադրութիւններն անվիւղ ու անխափան կեանքի էր կոչում աթոռակալը:

Երուսաղէմում սկիզբ առած վերագործօնքն ամբողջութեամբ պէտք չէ հանգեցնել որևէ անհատի գործունէութեանը, այլ տեղին կը լինի ասել, որ այդ շրջանում Երուսաղէմում հաւաքուել էր նուիրեալ միաբանների մի բոյլ, որի համախումբ աշխատանքը մեծապէս նպաստեց վերագործօնքին: Պատմութիւնը

Հանձնայից բացի պահպանել է նաև այլ պաշտօնեայ հոգեւորականների անունները, ինչպէս օրինակ՝ լուսարար Դաւիթ Սպարկերտցի և վերակացու Յակոբ Ուռհայեցի վարդապետները, որոնց յաճախադէպ ենք հանդիպում այս կամ այն գործարքը կնքելիս, միաբանութեան համար օգտաշատ քայլեր կատարելիս:

1721 թ. Պատրիարք Գրիգոր Շոթայակիրը Կ.Պոլսից հասնում է Երուսաղէմ, առաջին օրերից անձամբ է սկսում քննել, թէ Ս. Աթոռի տնօրինութեան տակ ինչ սեփականութիւն, եկեղեցական անօթներ են պահպանել իր նախորդներից յետոյ: Պատրիարքի մօտ ժողովուած միաբանները երդումով հաստատում են, որ հափշտակիչների ձեռքից հնարաւոր է եղել փրկել Ս. Աթոռի զարդերից ու եկեղեցական սպասքից միայն 3 պղնձեայ և 4 արծաթեայ սկիւի, 5 կանթեղ, 1 բուրվառ, 12 փոքր և 1 միջին խաչ: Հայ Երուսաղէմի ամբողջական պատմութեան առաջին հեղինակ Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննիսեանցն այս դրուագի մասին պատմելիս նշում է, որ մի քանի օր անց արքայական Հանձն վարդապետը լուսարարի և վերակացուի հետ յայտնում են Գրիգոր Շոթայակիրին, որ կարողացել են կեղեքիչ տեղակալների ու «նազըրների» ձեռքից փրկել-ազատել որոշ անօթներ: Թէև դա էլ մի մեծ բան չէր, սակայն լուրն ուրախութիւն է պատճառում պատրիարքին, և նոր գտածոները նոյնպէս արձանագրում է իր հրահանգով ստեղծուած «տումարի» մէջ<sup>9</sup>:

1722 թ. Գր. Շոթայակիրը, հիմնական աջակից ունենալով Հանձն վարդապետին, ընդարձակում է Ս. Յակոբեանց մայրավանքին կից Ս. Ստեփանոս աւանդատունը, որ կառուցուել էր Կիլիկիայի հայոց բազաւորների ժամանակներում: Այնտեղ շինում են Ս. Պատարագի սեղան Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով և Աւագան՝ ճերմակ ու վայելուչ մարմարեայ յօրինուածքով: Վանքի հիւսիսային կողմում բարձր ամբիոնում կանգնեցւում է սեղան Ս. Նշանի անունով, իսկ սեղանի վերելում շինում է գեղեցիկ մի պահարան, ուր պահում էին Կենաց Փայտի մասունքն ամփոփող Ս. Խաչը:

1726 թ. Փետրուարին Կ.Պոլսում 12 եպիսկոպոսների մասնակցութեամբ տեղի է ունենում Կարապետ Ուլնեցի<sup>10</sup> Կաթողիկոսի օծումը: Դրան մասնակցելու և Երուսաղէմի Միաբանութեան շնորհաւորանքները նորաօձ կաթողիկոսին քնելու համար Գրիգոր Շոթայակիրն իր կողմից պատգամատար է

ուղարկում Հանձն վարդապետին: Կարապետ Եպս. Ուլնեցին Կ.Պոլսում եպիսկոպոս է ձեռնադրում Յովհաննէս Կոլոտին, երբ վերջինս տասը տարի արդէն վարել էր Կ.Պոլսի պատրիարքութեան պաշտօնը: Մի փոքր ուշ Կարապետ Ուլնեցի Կաթողիկոսը մի խնդրով նամակ է գրում Գրիգոր Շոթայակիրին, որը խնդրանքը կատարելու մասին պատասխան նամակ է գրում և Կ.Պոլսի առաքում իր արքայական Հանձն վարդապետի և Յովհաննէս Կոլոտի աշակերտ Թովմա վարդապետի միջոցով, Կաթողիկոսին իբրև ընծայ ուղարկելով նաև Կենաց Փայտ պարունակող մի ոսկէ Խաչ: Այս միջոցին Յովհաննէս Հանձն վարդապետը ձեռնադրուում է եպիսկոպոս երկու այլ հոգեւորականների՝ Կոտիմայի առաջնորդ Մարտիրոսի և նշուած Թովմայի հետ մէկտեղ:

Կ.Պոլսից Երուսաղէմ վերադարձին Հանձնն իր հետ տանում է Կ.Պոլսի հայերի հռչակաւոր նամակը՝ ուղղուած Գրիգոր Շոթայակիրին, որով յորդորում են այլևս հանել ուր տարի շարունակ իր պարանոցն անցկացրած երկաթ շոթայակապ խաչերը, քանի որ Երուսաղէմի Ս. Աթոռը մեծապէս ազատուել էր պարտքերից, ու նաև Հայոց Պատրիարքի շոթայակապ մնալը ամօթանք էր Հայոց ազգի ու երեսելիների համար<sup>11</sup>: Այս նամակի հետ Հանձն Եպիսկոպոսը Կ.Պոլսից իր հետ բերում է նաև Երուսաղէմի պատրիարքութեանը վերաբերող նոր ընդունուած կանոնադրութիւնը, և անշուշտ դա է պատճառը, որ ժողովրդի մէջ և տարբեր գրքերում կանոնադրական այդ կետերը հետագայում յիշատակուում են «Հանձնայի նզովքներ» անունով, թէև Հանձնն անմիջական մասնակցութիւն չի ունեցել դրանք կազմելու գործում, այլ բերել-հասցրել է Երուսաղէմ:

Որպէս Գր. Շոթայակիրի արքայական Հանձնն մասնակցութիւն է ունեցել շինարարական բազմաթիւ ձեռնարկներին, իսկ Գեթսեմանի ձորում Ս.Աստուածածնի եկեղեցու 1730 թ. նորոգութիւնը ուղղակի կապուում է նրա անուան հետ: Այդ թուականին Յունաց փոխանորդի հետ համաձայնութեամբ նորոգւում են եկեղեցու տանիքը, ներսի և դրսի այլ հատուածներ, բարձրացւում են գաւիթի պատերը և կատարւում են այլ նորոգութիւններ:

Յովհաննէս Հանձնն վախճանուել է 1733 թ. Դեկտեմբերի 13-ին Երուսաղէմում, ծանր հիւանդութիւն տանելուց յետոյ:

Ս.Յակոբեանց թ. 598 ձեռագիրն ունի Հանձնայի հիւանդութեան և մահուան մասին պատմող մի ուշագրաւ յիշատակարան. «Ժ թու.

ՌՃԶԲ. ին և Յունիս ամսոյ ԺԲ. ին օրն Գ. շաբթի, Ս.Դանիէլի և Երից Մանկանց տօնին առ Աստուած փոխեցաւ եղբայրն իմ Հեննէ Յովհաննէս վաղորապետն, որ էր տան որդի Սրբոյն Յակոբայ և արքունակալ մեծի Գրիգոր Վարդապետի Բաղիշեցոյ: Ընթերցողք լի սրտիւ ասացէք Աստուած ողորմին, զի *կենճ*<sup>12</sup> էր հասակաւն և մատղաշ և քաղցր տեսօք: Եւ եղին մարմին սորա ի Ս. Փրկիչ մեծի Սինաս Վարդապետի կշտի, զի Բ ամ և Բ ամիս ի մէջ մահճաց տալմախի ցաւ կրեաց, չեղել վերջն ազատել, այսքան դեղ և բժիշկ չեղել օգուտ և ճար, *ախուպեթ* ան ցաւով զնաց, Տէրն ողորմի հոգւոյն...»:

Հեղինակաւոր ու նուիրական եպիսկոպոսի խիստ վաղաժամ մահը (40-ամեակը նոր էր լրացել) սուգի մէջ է թողնում Միաբանութեանն ու ազգականներին, առաւելապէս՝ Գրիգոր Շոթայակիւր Պատրիարքին, որի անփոխարինելի աջակիցն էր Հաննան բոլոր ձեռնարկումներում: Շոթայակիւրն իր ամենահաւատարիմ գործակցից յանկարծակի գրկըւելով՝ անգամ ցանկանում է հրաժարուել պատրիարքական արժեքից: Կ.Պոլսի Հայոց իշխանատուներին ուղղուած Գրիգոր Շոթայակիւրի նամակում լաւագոյնս արծարծուած են Պատրիարքի այդ տրամադրութիւնները, երբ նա գրում է. «Արդ՝ սիրելիք իմ և տեսաք Ս. Տանն, ես ձերացայ եւ անկարող ի գործս, մանաւանդ միջաքել եւ յուսակտուր արար զիս տարածան մահ սիրելի արքունակալին իմոյ, և կամ ի սուգ անմխիթար»<sup>13</sup>:

Յովհաննէս Հաննան քաղուած է Երուսաղէմի Հայոց Ս.Փրկիչ վանքի հայկական գերեզմանատանը, Սինաս Համդեցու հարեանութեամբ, տապանագիրն է հետեւեալը. «Այս է տապան հանգստեան բազմաշխատ արքունակալ Հաննէ Յովհաննէս աստուածաբան վաղորապետի և արքեպիսկոպոսին Երուսաղէմացոյ, որ ԺԷ ամ զաթոռակալութեան գործն կատարեաց և վիշտս բազումս կրեաց ի պարտուց վճարումն և ի շինութիւնն, աստուածաղիւր արքուն Սրբոյն Յակոբայ և տարածան մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս ի թու. ՌՃԶԲ ամին և ի Յունիս ԺԱ. և մեծ սուգ եթող սիրելեաց իւրոց. Որք հանդիպիք և ընթերնուր լի բերանով յիշեցէք և Աժ. Ողորմի ասացէք նմա. և Տէր ձեզ ողորմեսցի. Ամէն»:

Յովհաննէս Հաննայի անուան հետ Երուսաղէմում կապուած բազմաթիւ յիշատակներ կան: Ըստ Ս.Յակոբեանց ձեռագրատան ք. 532 ձեռագրի յիշատակարանի, 1733 թ. Հաննայի մայրը՝ Մահտեսի Արզուն իր

Յովհաննէս որդու և Մահտեսի Հիլանէ դստեր յիշատակի համար Ս. Յակոբ վանքին է նուիրել ոսկեայ ականազարդ մի խաչ՝ կենաց փայտի մատունքով:

Ս. Յակոբեանց մայրավանքից ներս գտնուող Ս. Մինաս մատուռի արտաքին դռան վրայ Ս. Յակոբ Տեառնեղօր նկարի արծաթի շրջանակի մէջ առնուած պատկերներից մէկի ներքեւի անկիւնում ծնկի եկած է Հաննա արեղան, և վրան գրուած է՝ «ՀԱՆՆԱ ԱԲԵՂԱՅ»: Բոլոր նկարագրողները հաւաստում են, որ դա Յովհաննէս Հաննայի կենդանագիր պատկերն է<sup>14</sup>:

Երուսաղէմի Հայոց քաղամասի մի հատուածը՝ Հաննա քաղ, որ երբեմն ասում է նաև «Աննա քաղ», կառուցել է Յովհաննէս Հաննան 1730 թ., ի յիշատակ Երուսաղէմը ծանր պարտքերից ազատելուն:

Հարկ է խօսել բանասիրական մի շփոթի մասին: Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննիսեանցն իր պատմութեան մէջ նշում է, որ Հաննան սքանչելի արուեստով նկարել է Փրկչի տնօրինական և սրբերի պատկերներ, որոնք կարելի է տեսնել Ս. Յակոբեանց տաճարում և այլ եկեղեցիներում<sup>15</sup>: Սակայն որևէ այլ աղբիւր Հաննային չի ներկայացնում որպէս նկարիչ կամ ծաղկող: Թոյլ ենք տալիս պնդել, որ Աստուածատուր Եպիսկոպոսը Յովհաննէս Հաննա մատենագիրն սխալմամբ միացրել է մէկ այլ Հաննայի՝ Մերձաւոր Արևելքում և գերազանցապէս Եգիպտոսում ապրած և ստեղծագործած հայագի Հաննա Երուսաղէմացի նկարչի հետ, որն արաբական աղբիւրներում յայտնի է Յովհան[նա] ալ-Արմենի անունով, և որից բազմաթիւ նկարներ ու սքապատկերներ են պահպանուել զանազան տաճարներում, այդ թւում՝ դպտի եկեղեցիներում<sup>16</sup>: Նկարահան Հաննայի ապրած շրջանն ընկնում է 1715-1783 տարիներին, մինչդեռ մեր Հաննան, ինչպէս նշեցինք, մահացել է 1733 թ.: Նկարիչ Հաննայի մասին մի հրապարակման հեղինակ Ն. Միքայէլեանը պարզորոշ գրում է՝ «Գալով պատմիչ Հաննա Երուսաղէմացուն, որ եղել է հոգեւորական և պատրիարքական փոխանորդ, ապա նա մահացել է 1733 թ. և նկարչութեամբ չի զբաղուել»<sup>17</sup>: Այս շփոթը, կարծում ենք, առաջ է եկել Յովհաննէս անուան արաբական Հաննա տառադարձուած տարբերակից, այդ անունն են կրել մի քանի Հաննաներ:

**«Պատմութիւն Երուսաղէմի» երկը:** Մատենագիր Յովհաննէս Հաննան իր անունը յատերժացրել է «Երուսաղէմի պատմութիւն»

ստեղծագործութեամբ: Այն ունեցել է մի քանի հրատարակութիւն, առաջինը 1731 թ., ապա՝ 1734, 1767, 1782, որոնցից վերջինը՝ հայատառ բուրբերէն: Պատմութիւնը նկարագրելիս մենք յենուել ենք առաջին տպագրութեան վրայ:

Իր գործունէութեան և դիրքի բերումով Երուսաղէմի հայ կեանքին, հոգևոր արարողութիւններին, միջկրօնական յարաբերութիւններին, մայրաքաղաք Կ.Պոլսի հետ ունեցած կապերին քաջատեղեակ Յովհաննէս Հաննան նախանձախնդիր է եղել դրանք գրի առնելու, ուխտաւորների այցելութիւնները դիւրացնելու համար սրբավայրերի մասին տեղեկութիւնները շարադրելու և ներկայացնելու, նաեւ յաջորդներին բողնելու հարցում:

Հաննայի պատմութեան ամբողջական վերնագիրն է «**Գիրք Պատմութեան Սրբոյ եւ մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմի եւ Սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի**»<sup>18</sup>: Հեղինակը նպատակ է ունեցել ստեղծել Փրկչի և առաքելական դարերի հետ կապուած սրբավայրերի ամբողջական նկարագրութիւն՝ «վասն խրախմանութեան տէրունական ուխտաւոր մահտեսեաց»: Երուսաղէմի հոգևոր կեանքի կենսագործունէութիւնը, հասոյթներն ու մուտքերը մեծապէս կախուած էին ուխտաւորական խմբերի հոսքերի հետ: Ս. Յակոբեանց Միաբանութեան գործունէութիւնը նպատակաւորողուած էր, սրբավայրերը պաշտպանելու և ծէսն անխափան կատարելու հետ մէկտեղ, ուխտաւորներին ընդունելու, տեղաւորելու, սրբավայրերը նրանց առաջնորդելու, բացատրելու և այլ ծառայութիւններ մատուցելու հետ: Եւ Յովհաննէս Հաննան իր պատմութիւնը ստեղծելիս մեծապէս առաջնորդուել է գործնական մղումով՝ բաւարարել ուխտաւորների ընթերցասիրութիւնը:

Պատմութեան «Բան առ ընթերցող եղբարս մեր» առաջաբանում Հաննան ներկայացնում է իր երկը գրելու շարժառիթը: Սուրբ Յակոբեանց Վանքն ու Միաբանութիւնը ծանր օրեր էին ապրում մեծագին պարտքերից, և այդ դառն ժամանակներում, - ասում է հեղինակը, - ինքը մտնում է Ս. Յարութեան տաճար՝ ճգնութեամբ ողբալու «տաքաբախտիկ կեանքը»: Ս. Յարութիւնում անցկացրած հինգ ամիսներին «տեսի զայլատեսնս, որք ունէին ի ձեռս իւրեանց զգիրս պատմութեանց Սրբոյ Երուսաղէմի ընդարձակապէս գրեալ ուրոյն ուրոյն: Ուստի յոյժ գովութեան վարկայ գնոցայն բան գմերն» (էջ 7): Այդժամ բարի նախանձով է համակում Հաննան, պէտք է

յիշել՝ լինելով 25-30 տարեկան հոգեւորական, սկսում է գրաւոր աղբիւրներից և բանաւոր զրոյցներից հաւաքել Սուրբ Տեղերի մասին տուեալներ և ամբողջացնում ու շարադրում որպէս պատմութիւն:

Մէկ խօսքով Հաննան իր պատմութեան բովանդակութիւնն այսպէս է բանաձեւում. «**Վասն գովութեան Սրբոյ երկրիս վկայութեամբ Աստուածաշունչ գրոց**» (8):

Պատմութեան շարադրանքին նախորդում է «Վասն գուրութեան Սրբոյ Երուսաղէմի, վկայութեամբ Սբ. Գրոց» գլուխը, ուր Աստուածաշնչից քաղուած ներկայացուած են Երուսաղէմի պատմական անցուղարձերը, ապա հեղինակը մի քանի յստակ կէտերով պարզաբանում է, թէ ինչու հաւատաւոր քրիստոնէան անպայման պէտք է այցելի, հաղորդակից դառնայ քրիստոսակիր վայրերին. այս տեղում է Աստուածն իջել իր Որդու միջոցով և հրեշտակներով, ուրեմն մենք նոյնպէս պէտք է այս վայրերում գնանք Քրիստոսին բնդառաջ «եւ մարմնաւոր աչօք տեսանել զտեղիս մարդեղութեան նորա և վայելել զնորիս պարգեաց խորհրդապէս աստուածահոտ սուրբ տեղեացն և ընդունիլ զբաւութիւն և զբողոքիւն յանցանաց անախանձ պարգեւատրողէն» (23):

Պատմութեան հետագայ 140 հատուածներում Հաննան մէկ առ մէկ պատմում է Երուսաղէմի և շրջակայքի սրբավայրերի մասին, մանրամասնում է յատկապէս հայկական տնօրինական վայրերը, և այդ ամէնը՝ ուխտաւորներին ուղղուած յորդորներով ու խրատներով:

Հաննայի պատմութիւնը երեք հիմնական բաղադրիչ ունի: Այն նախ և առաջ համաքրիստոնէական սրբավայրերի պարզ ու մատչելի նկարագրութիւն է, որից իմանում ենք բազմաթիւ մանրամասներ Երուսաղէմի յատկապէս քրիստոնէաշունչ պատմութիւնից: Օրինակ Հաննան ասում է, որ Սողոմոնի տաճարի շրջակայքում աղքատ խրճիթներում բնակում էին այլազգի մահմեդականներ, որ քրիստոնէաների մուտքը տաճար բնաւ անվրտանգ չէ, և պատահել են բազմաթիւ անախորժութիւններ այլազգիների ձեռքից:

Հաննայի պատմածներից շատ բան գրեթէ անփոփոխ կերպով կարելի է տեսնել նաև մեր օրերում, սրբավայրերի նկարագրութիւնն ու տնօրինող եկեղեցիների կարգը գրեթէ չեն փոխուել, այսինքն՝ **այն արժանահաւատ պատմութիւն է:** Այսպէս օրինակ՝ Ս. Յարու-

քեան տաճարի մուտքի պահպանութիւնը, ինչպէս տեսնում ենք Հաննայի պատմութեան մէջ, գրեթէ անխախտ է մնացել մինչ օրս, այդ քում՝ այլազգիների կողմից այն տնօրինելու, գլխաւոր մուտքի դուռը բացելու իրաւունքը. «Այլ է իշխօղն մեծ, այլ է եւ դռնապանն, այլ է եւ փակակալն, որք կնքեն գոլուն սրբոյ Յարութեան եւ բանան երեք ազգաց գիտութեամբն, եւ թարց մոցա ո՛չ բանան: Ի մէջ դրանց արարեալ են փոքրիկ պատուհանք, որ անտի տան զհոգեպահիկ կերակրիկն միաբանից, որք պաշտեն զսրբութեան տեղիքն»: Նկարագրուածը նոյնութեամբ պահպանուել է մահ այսօր, «երեք ազգ» ասելով հեղինակը նկատի ունի Ս. Յարութեան Տաճարը հաւասարապէս տնօրինող երեք եկեղեցիներին՝ Հայ Առաքելական, Յոյն Ուղղափառ և Կաթոլիկ:

Պատմութեան երկրորդ բաղադրիչը հայկական սրբավայրերի մասին պատմելն է: Հաննան աչքի առաջ ունենալով հայ ուխտատրիին՝ կարծես անմիջական գրոյցների ձևով մանրամասնում է, թէ ինչ տնօրինական վայրեր է տիրապետում մեր եկեղեցին ու Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, ինչ դժնի պատմութեամբ են դրանք հասել մինչ իր օրերը, և ինչ մեծ զոհողութիւնների գնով են հայ հոգեւորականները կարողացել պահպանել սրբավայրերը բազմաթիւ ազգերի, իշխանութիւնների, կրօնների, մուսաւոնների պայմաններում:

Առանձնակի սիրով է խօսում Գրիգոր Շորայակի մասին՝ նրա համար չխնայելով մակդիրները, ինչպէս՝ «զիրեշտակակրօն արիիւնայիսկպոսն եւ առաջնորդն Սրբոյ Կարապետի շնորհաբաշխ շիրմի գտէր Գրիգոր սրբաբարոզ վարդապետն», «երանելի վարդապետն Գրիգորիոս», «երկրորդ լուսաւորիչն սրբոյ աթոռոյս Երուսաղէմի Գրիգոր աստուածաբան վարդապետն»:

Հեղինակը նկարագրում է Շորայակի ժամանակ Երուսաղէմում սկսուած լայնածաւալ շինարարական ընթացքը: Պատմութեան այս ու այն գլուխներում սփռուած դրուագներն ի մի հաւաքելով կարող ենք ստանալ 18-րդ դարի սկզբին Երուսաղէմի հայկական սրբավայրերի նորոգութեան ու շինարարութեան պատկերը, որից կը պարզուի, որ Գրիգոր Շորայակի ժամանակ մի մեծ ու աշխոյժ շինարարական հրապարակի էր վերածուել Երուսաղէմի հայ կեանքն իր բոլոր դրսեւորումներով:

Մանրամասն և երկար է շարադրուած պատմութեան «Վասն անցիցն անցելոյ ի վերայ վանից Սրբոյն Յակոբայ» գլուխը, որն

ամփոփում է հեղինակի ապրած ժամանակների մանրամասները, պատմութիւնն է Ս. Յակոբեանց վանքի պարտքերի, Կ.Պոլսից ուղարկուած կառավարիչների ապաշնորհ վարքի, Յովհաննէս Կոլոտ և Գրիգոր Շորայակի պատրիարքների աթոռակալման, պարտքերից Ս. Արոն ազատելու մասին: Այս գլուխը որոշ ձեռագրերում հանդիպում է որպէս ինքնուրոյն երկ, հաւանաբար Հաննան այն գրել է աւելի վաղ և յետոյ միացրել է իր պատմութեանը:

Պատմութեան երրորդ բաղադրիչը բարոյախրատական ոգին է: Յովհաննէս Հաննայի երկն իր ամբողջութեան մէջ խրատանի է՝ ներկայացուած Սուրբ Վայրերի նկարագրութեան եղանակով: Հոգեւորական հեղինակը սրբավայրերը սոսկ արտանկարչի դիքերից վերարտադրող չէ, այլ իր նկարագրութիւնը ծառայեցնում է մարդկանց քրիստոնէական պատուիրաններով զինելու և աշղպիսով սրբավայրին ու հաւատքին մօտեցնելու համար:

Բազմաթիւ դրուագներում հեղինակը խորհուրդների ձևով հորդորում է ուխտատուներին, թէ ինչպէս պէտք է վարուել այս կամ այն սրբավայրն այցելելիս, ինչ ուղիներով պէտք է շարժուել և այլն: Ս. Յարութեան տաճարի համար հորդորում է՝ «Տէրունական ուխտատուքն յամենայն աւուր յերեկոյի եւ յառաւօտի պարտին առանց դանդաղանաց գալ յերկրպագութիւն սրբոյ դրանն, որ է դուռն ողորմութեան, ընդունիլ աներեսութապէս զգօրութիւն շնորհաց սրբազնասուրբ Գերեզմանի Տեառն Աստուծոյ մերոյ ըստ հաւատոց իւրեանց»:

Հաննայի «Գիրք պատմութեան» լեզուն գրաբարն է՝ ձեւաբանական, շարահիւսական ողջ համակարգով: Ի հարկէ, այն մի շարք լեզուական յատկանիշներով տարբերում է դասական շրջանի գրաբարից և առաւելապէս ներկայացնում է ուշ միջնադարի գրաբարը, որով գրուել են և յայտնի են բազմաթիւ ժամանակագրութիւններ, պատմութիւններ: Շեշտադրումը պարզ ու մատչելի նկարագրութեան վրայ անելով՝ հեղինակը առանձնապէս չի ճգնել իր երկը պաճուճել գեղարուեստական հնարանքներով: Այստեղ հիմնական նպատակը մատչելի կերպով քրիստոնէայի մտքի ու սրտի հետ խօսելու ձգտումն է: Ամբողջ երկը մի անկեղծ գրոյց է հասցէատէր-ընթերցողի հետ, որն այս դէպքում Երուսաղէմ ուխտի եկած, ուխտի գնալ ցանկացող և առհասարակ բոլոր քրիստոնէաներն են:

Պատմութեան մէջ մի քանի տեղ Հաննայի խօսքը միտում է բանաստեղծութեան,

մանաւանդ տէրունական գովասանական հատուածներում: Օրինակ Յիսուսի Ս. Գերեզմանի նկարագրութիւնն աւարտում է չափածոյ տողերով.


*Սա է Գերեզման եւ ուրախութեան տաճար,  
Գերեզման եւ տեղի երկնաւոր հարսանեաց,  
Գերեզման եւ արեւմտ արեգականն արդարութեան,  
Գերեզման եւ արեւելք լուսոյ...:*

Ս.Յարութեան 1720 թուականի նորոգութեան նկարագրութիւնը նոյնպէս եզերում է բանաստեղծութեամբ.

*Ամաս այս շինեցաւ յոյժ փառաւորեալ,  
Վիճակս մեր Հայոց խաչի պանծացեալ:  
Շինումն Սուրբ Յարութեան խաչին է սկսեալ,  
Եւ աւարտումն շինէ՝ զգինամէ թուեալ,  
Արապի լեզուաւ այսու անուանեալ,  
Եւ Յոյն բարբառոյս Անաստաս կոչեալ:*

\* \* \*

Յաւարտ պէտք է շեշտել, որ Երուսաղէմի Հայ համայնքի և Միաբանութեան պատմութեան արդիւնաւոր մշակներից մէկը՝ Յովհաննէս Հաննա Երուսաղէմացին իր արժանի տեղը պէտք է գրաւի հայ գրականութեան, առհասարակ հայ հոգեւոր մշակոյթի անդաստանում, իսկ նրա «Պատմութիւն Երուսաղէմի» երկն արժանի է առաւել ուշադրութեան և ինչու չէ՝ նորովի վերահիշատարակութեան:



(Նկարի գրութիւնը) «ՀԱՆՆԱ ԱՐԵՂԱՅ».  
նկարի դրուագ Ս.Յակոբ մայրավանքի  
պատկերից:

## SUMMARY

Since the days of Christ in Jerusalem has been an Armenian colony. The local Armenian priests have wielded and still continue wield numerous holy sites, which preservation have been the main mission of the Armenian Congregation.

In addition, in Jerusalem Armenians also have created literary, historical, theological numerous works. Thus Jerusalem has been one of the centers of Armenian writing in the Middle Ages, which is still not fully explored.

Our publication is dedicated to Armenian priest Hovhannes Hanna Jerusalem at the end of 17th and the beginning of 18th centuries, who has led number of positions in the Armenian Congregation, and has been the deputy of patriarch Gregory Shghtayakir. He also has written "The History of Jerusalem," which has had five editions. Hovhannes Hanna's history hasn't lost its value to the present day. It has historical, linguistic great importance, the details of which we tried to describe, relying on printed and handwritten multiple sources.

1.- Սոյն յօդուածի մէկ այլ տարբերակը տպագրուած է «Էջմիածին» հանդէսում, 2015, թիւ Թ, էջ 64-83: Հեղինակը հայցում է սաղմնահայ ընթերցողի ներդաստութիւնը, եթէ բերուած որոշ փաստեր խիստ յայտնի կը նկատուեն. դրանք հրապարակման մէջ ներկայացրել ենք՝ հաշուի առնելով Հայաստանեան ընթերցողին, որ կարող է մանրամասն ծանօթ չլինել Երուսաղէմի հայոց պատմութեանը:

2.-«Գիրք պատմառանգ», ըստ Յ. Տաշեան, Յուզակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, էջ 232:

3.-Չեռագիր Սուրբ Յակոբեանց մատենադարանի, թիւ 652, էջ 492: Չեռագրային այս և յօդուածում բերուող միւս տուեալները բաղել ենք Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռագրերից, որից օգտուելու հնարաւորութիւն ունեցել ենք 2000-2002 թթ. Երուսաղէմի հոգևոր վարժարանում աշխատելու տարիներին:

4.-Երուսաղէմեան գրչութեան կենտրոնին են նուիրուած մեր հրապարակումները «Միոն» հանդէսում, տե՛ս ա) Ն.Պօղոսեան, «Երուսաղէմի հայ գրչութեան կենտրոնը ԺԴ. դարում». Ս.Հրեշտակապետաց, «Միոն», 2002, ք. 1-3, էջ 64-72: ք) «Երուսաղէմի հայ գրչութեան կենտրոնը ԺԵ. դարում». Ս.Փրկիչ, «Միոն», 2002, ք. 4-6, էջ 204-208:

5.-Արքիւրքերում Յովհաննէս Երուսաղէմացու անունը գործածում է Հաննա, Հէննէ, Հաննէ, Աննա տարբերակներով, որոնցից առաւել յաճախաւէ պէ Գործածում Հաննա ձևը, որը նախընտրում ենք մա՛ն մենք:

6.-Գրագիր:

7.-«Ձուար ճիշերի Օղլու քահանայի ճանապարհագրութիւն և ուխտ յԵրուսաղէմ», «Բագմաւէպ», 1869, էջ 177:

8.-Կասկածելի է թոււ Սկրտիչ Աղաւնումու բերած մի տուեալը, համաձայն որի՝ Յովհաննէսը սարկաւագ է ձեռնադրուել 1700 թ.: Եթէ ստույգ է ձեռնդան 1693 թուականը, ուրեմն ճիշտ չէ սարկաւագ ձեռնադրուելու Սկ. Աղաւնումու բերած թուականը: Տե՛ս Սկ. Աղաւնումու,

Միաբանք և այցելութ Հայ Երուսաղէմի, էջ 359:

9.-Տե՛ս Աստուածատուր Եպս. Յովհաննէսեանց, «Ժամանակագրական պատմութիւն Ս.Երուսաղէմի», հտ. Ա-Բ, Երուսաղէմ, 1890, էջ 50-55:

10.-Կարապետ Բ. Ուլենցի, Կաթողիկոս ամենայն հայոց 1726-1729 թթ.:

11.-Տե՛ս Ն.Պօղոսեան, «Կ.Պոլսի հայերի մամակը Երուսաղէմի Գրիգոր պատրիարքին», «Բանբեր» Երևանի համալսարանի, 2012, ք. 136.1, էջ 63-72:

12.-Կենն-երիտասարդ:

13.-Գր. Եղբայակրի մամակը քաղել ենք Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննէսեանցի «Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի» գրքից, հտ. Բ, Երուսաղէմ, 1890, էջ 30:

14.-Տե՛ս օրինակ՝ Մկրտիչ Եպս. Աղաւունցի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ, Երուս., 1931, էջ 259:

15.-Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննէսեանց, նոյն տեղում, էջ 30:

16.-Տե՛ս Ն. Միքայէլեան, Նկարիչ Յովհաննէս Երուսաղէմացիին Եգիպտոսում, ՊԲՀ, 1967, ք. 2-3, էջ 273: Երկու Հանձնաժողովներ մոյնացնելու վրիպումը, որ գրատու աղբիւրներում թերևս սկիզբ է առնում Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննէսեանցի «Պատմութիւնից», մինչև վերջին տաճարակները խիստ տարածուած էր և անցնում էր գրքից գիրք, հանդիպում է նաև Սկ. Աղաւունցու երկերում, անգամ համացանցային միջոցներում է կարելի է այդ շփոթիկ համոզուել:

17.-Յովհաննէս Հաննա Երուսաղէմացի, «Գիրք Պատմութեան Սրբոյ եւ մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմի», Կ.Պոլիս, 1731: Տիտղոսաբերքին նշում է 1727 թուականը, որ թերևս պատմութիւնն աւարտելու տարին է: Պատմութիւնից քաղուած մեջբերումների էջերը կնշենք շարադրանքում:



Ս. Յակոբ Մայր Տաճար  
Հիւսիսային կողմ

## THE THEME OF GENOCIDE IN CONTEMPORARY ARMENIAN LITERATURE (\*)

Minas Kojayan

*"We were born to sing the song of LOVE..."*  
(Siamanto, 1978-1915)

As a subtitle for my presentation, I chose this specific quote, which belongs to the universally respected Armenian poet, Siamanto (Atom Yarjanian), who was hailed from the town of Agn in Western Armenia and was martyred during the genocide of the Armenians perpetrated by Ottoman Turkey beginning in 1915. Unfortunately, in the annals of modern Armenian literature, stemming from the end of the 19th century until the present era, the primary or, dare say, prevailing theme of Armenian poets and prose writers has centered on socio-economic persecutions, mass slaughters, Genocide and rebirth.

The aforementioned assertion pertains not only to Armenian authors writing in their native Armenian, but also to foreign language authors of Armenian origin who lived throughout the Middle East, as well as in Russia, Italy, France, Great Britain, the United States, Canada, and South America. Within the modern Armenian literary heritage, there is nary an author, writing in Armenian or a foreign language, who has not reflected on the theme of the Armenian Genocide. The reason for this is quite clear, since, between 1915 and 1923, the overwhelming majority of the population of an entire civilization was annihilated and dispossessed of its 3,500-year-old homeland, and its hearths, properties, national and sacred treasures, and cultural and spiritual centers. Essentially, a nation was stripped of its patrimonial land and haven. The force of the blow was so horrific and incompatible with the mindset of rational creatures that, to this very day, the repercussions of the crime painfully cry out within the souls of Armenians. Alas, Armenians are born with this pain, grow up with this pain, and leave this world with a sense of sorrow.

In this sense, races and nations who have experienced genocide and holocaust can well understand the pain of the Armenians. We hope for the day when such nations can form a united front in pursuit of justice, and, leaving aside political